

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՆԱԾԻՆ ՀԻՊՈԹԻՐԵՈԶԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ, ԱԽՏՈՐՈՇՄԱՆ և ԲՈՒԺՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Ուղեցույցը տրամադրում է բնածին հիպոթիրեոզ ունեցող երեխաների արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված բուժական և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել բնածին հիպոթիրեոզով երեխաների բուժման արդյունքները:

Մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Մանկական էնդոկրինոլոգների Հայկական Ասոցիացիայի անդամների կողմից: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել Մանկական էնդոկրինոլոգիայի Եվրոպական Ասոցիացիայի կողմից (European Society for Pediatric Endocrinology, EASD) 2014թ. հրատարակված «Մանկական էնդոկրինոլոգիայի կոնսենսուսային ուղեցույցը բնածին հիպոթիրեոզի մշտադիտարկման, ակտորոշման և բուժման համար» (EASD Clinical Practice Consensus Guidelines 2014 Compendium, Screening, diagnosis and management of congenital hypothyroidism), ինչպես նաև Cochrane library և UpToDate էլեկտրոնային շտեմարանների տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել Եվրոպական էնդոկրինոլոգիայի ասոցիացիայի կողմից Ցուցումների ուսումնասիրման և գնահատման համալիրի (GRADE) ձևափոխված տարբերակը (տես՝ Հավելված 1.): Տեղայնացման/ ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Մանկական էնդոկրինոլոգների Հայկական Ասոցիացիայի կողմից: Ուղեցույցը նախատեսված է մանկական էնդոկրինոլոգների, էնդոկրինոլոգների, մանկաբույժների, թերապևտների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա ուղեցուցում լուսաբանվել են բնածին հիպոթիրեոզի նորածնային մշտադիտարկումը, վերլուծական մեթոդաբանությունը, արդյունավետության և բնածին հիպոթիրեոզի մշտադիտարկման ռազմավարության արդյունավետությունը, նորածինների բնածին հիպոթիրեոզի ռիսկի հատուկ խմբերի մշտադիտարկումը, ախտորոշման չափորոշիչները, նորածնային մշտադիտարկմամբ TSH բարձր կոնցենտրացիայի արդյունքների տեղեկացումը ընտանիքին, ընտանեկան բժշկին և տեղամասային մանկաբույժին, կապը ընտանեկան բժշկի, տեղամասային մանկաբույժի կամ կրթողների հետ, բնածին հիպոթիրեոզի ծանրության գնահատման չափանիշները կլինիկական, կենսաքիմիական և ռադիոլոգիական հատկանիշների տեսանկյունից, նկարների տեխնիկաների վայրը-սցինտիգրաֆիա պերքորատի դուրս գրման թեստով կամ առանց դրա և ՈւՁՀ բնածին հիպոթիրեոզ ախտորոշելիս, բնածին մալֆորմացիաներ և համախտանիշներ, բնածին հիպոթիրեոզի բուժումը և մոնիտորինգը, բուժման և անբարենպաստ ելքերի մոնիտորինգ, չափորոշիչներ վերագնահատելու համար վահանաձև գեղձը, տարբերակել մշտական և անցողիկ բնածին հիպոթիրեոզը TSH կոնցենտրացիայով և նորմալ տեղակայված վահանաձև գեղձով երեխաների բուժումը, բնածին հիպոթիրեոզով հղի կանանց բուժումը և մոնիտորինգը, բուժված պացիենտների ելքերը, աճ, սեռական հասունացում և ծնելիություն, ոսկրի առողջություն, մետաբոլիկ և սիրտ-անոթային առողջություն, գենետիկ խորհրդատվության չափորոշիչները, մոլեկուլյար կենսաբանությունը բնածին հիպոթիրեոզի ախտորոշման և բուժման մեջ, պոտենցիալ ցուցումներ անտենատալ ախտորոշման համար, մշտադիտարկման մեթոդները պտղի հիպոթիրեոզի համար, պտղի բուժման վարումը և չափորոշիչները արգանդում:

Հեղևություններ

Միջազգային փորձագետների մեծաքանակ խումբ եկել է համաձայնության բնածին հիպոթիրեոզի վարման բազմաթիվ կարևոր սկզբունքների վերաբերյալ: Չնայած այն փաստին, որ շատ խորհուրդներ ունեն թույլ ապացուցողական ուժ, այնուամենայնիվ, այս մեթոդաբանությամբ մշակված տեղեկատվությունը՝ դա պացիենտների բուժման արդյունքների բարելավման հիմքն է:

Բանալի բառեր

Բնածին հիպոթիրեոզ, նորածիններ, մրավոր հեղամնացություն, մշտադիտարկում, լևոթիրոքսին, վահանաձև գեղձ

Պատասխանատու համակարգող

Աղաջանովա Ե.Մ, բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի վարիչ, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիական կլինիկայի ղեկավար, ՀՀ ԱՆ գլխավոր մանկական էնդոկրինոլոգ

Աշխատանքային խմբի անդամներ

- Ն.Հ. Զոհրաբյան, ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի ասիստենտ
- Լ.Գ. Քալանթարյան, ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի դասախոս, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիայի կլինիկայի բժիշկ-էնդոկրինոլոգ
- Գ.Մ.Բայբուրդյան- ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի դասախոս, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիայի կլինիկայի բժիշկ-էնդոկրինոլոգ
- Ռ.Լ.Մարկոսյան- բ.գ.թ., ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի դոցենտ, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիայի կլինիկայի բժիշկ-էնդոկրինոլոգ
- Լ.Վ.Նավասարդյան-բ.գ.թ., ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի դոցենտ, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիայի կլինիկայի բժիշկ-էնդոկրինոլոգ

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները շահերի բախում չեն նշում: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները չեն ֆինանսավորվել:

Շնորհակալական խոսք

Պատասխանատու համակարգողը իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր անդամներին, ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման

աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում:

Բովանդակություն

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Նորածնային մշտադիտարկում

Վերլուծական մեթոդաբանություն, արդյունավետություն և բնածին հիպոթիրեոզի մշտադիտարկման ռազմավարության արդյունավետությունը

Նորածինների բնածին հիպոթիրեոզի ռիսկի հատուկ խմբերի մշտադիտարկում

Ախտորոշման չափորոշիչները

Նորածնային մշտադիտարկմամբ TSH բարձր կոնցենտրացիայի արդյունքների տեղեկացումը ընտանիքին, ընտանեկան բժշկին և տեղամասային մանկաբույժին
Կապը ընտանեկան բժշկի, տեղամասային մանկաբույժի կամ կրթողների հետ

Բնածին հիպոթիրեոզի ծանրության գնահատման չափանիշները կլինիկական, կենսաքիմիական և ռադիոլոգիական հատկանիշների տեսանկյունից

Նկարների տեխնիկաների վայրը- սցինտիգրաֆիա պերքլորատի դուրս գրման թեստով կամ առանց դրա և ՈւՁՀ բնածին հիպոթիրեոզ ախտորոշելիս

Բնածին մալֆորմացիաներ և համախտանիշներ, որոնք պետք է սիստեմատիկորեն փնտրել բնածին հիպոթիրեոզով երեխաների շրջանում

Բնածին հիպոթիրեոզի բուժումը և մոնիտորինգը

Բուժման և անբարենպաստ ելքերի մոնիտորինգ

Չափորոշիչներ վերագնահատելու համար վահանաձև գեղձը, տարբերակել մշտական և անցողիկ բնածին հիպոթիրեոզը TSH կոնցենտրացիայով և նորմալ տեղակայված վահանաձև գեղձով երեխաների բուժումը

Բնածին հիպոթիրեոզով հղի կանանց բուժումը և մոնիտորինգը

Բուժված պացիենտների ելքերը

Աճ, սեռական հասունացում և ծնելիություն

Ոսկրի առողջություն

Մետաբոլիկ և սիրտ-անոթային առողջություն

Գենետիկ խորհրդատվության չափորոշիչները

Մոլեկուլյար կենսաբանությունը բնածին հիպոթիրեոզի ախտորոշման և բուժման մեջ

Պոտենցիալ ցուցումներ անտենատալ ախտորոշման համար, մշտադիտարկման

մեթոդները պտղի հիպոթիրեոզի համար, պտղի բուժման վարումը և չափորոշիչները

արգանդում

Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

Հավելված 1. Ապացույցների դասակարգման համալիր

Հավելված 2. Ուղեցույցի առանցքային խորհուրդների ամփոփում

Հապավումներ

ՎԳ՝ վահանագեղձ

CCH (central CH)՝ կենտրոնական բնածին հիպոթիրեոզ

CH (congenital hypothyroidism)՝ բնածին հիպոթիրեոզ

DBS (dried blood spot)՝ չորացած արյան կաթիլ

HrQOL (health-related quality of life)՝ առողջություն-կապված կյանքի որակի հետ

FT4 (free T4)՝ ազատ T4

TSH՝ թիրեոտրոպ խթանող հորմոն

GA (gestational age)՝ հեստացիոն տարիք

LBW (low birth weight)՝ ցածր քաշով ծնված

L-T4 (levothyroxine)՝ լևոթիրոքսին

T4 (thyroxine)՝ թիրոքսին

TFT (thyroid function test)՝ ՎԳ ֆունկցիայի թեստ

TT4 (total T4)՝ ընդհանուր T4

VLBW (very low birth weight)՝ շատ ցածր քաշով ծնված

NICU (neonatal intensive care units)՝ նորածնային վերակենդանացման բաժանմունք
NIS (sodium/iodide symporter)՝ նատրիում/յոդ համակցիչ

Նախաբան

ՎԳ-ի հորմոնները կարևոր դեր են խաղում վաղ նեյրոզարգացման հարցում: Բնածին հիպոթիրեոզը մտավոր հետամնացության ամենատարածված կանխարգելիչ պատճառներից է: Մշտադիտարկման ծրագրերը վերջին 30 տարիների ընթացքում կիրառվել են ամենազարգացած երկրներում, հանգեցրել են հաջողությունների նորածինների մոտ բնածին հիպոթիրեոզի վաղ հայտնաբերման և բուժման հարցում և վերացվել են ծանր նեյրոզարգացման դեֆիցիտները ուշ ախտորոշման արդյունքում: Բնածին հիպոթիրեոզով պացիենտների շրջանում ճանաչողական գործառույթի ուսումնասիրությունը, որոնք բուժվել են վաղ ծնվելուց հետո, ցույց է տվել, որ զարգացման կարող են հասնել պացիենտների մեծամասնության մոտ, չնայած որոշները կարող են ունենալ թեթև նեյրոճանաչողական դեֆիցիտ [1]:

Բնածին հիպոթիրեոզի տարածվածության գնահատումները տարբեր են ըստ որոշման մեթոդի.մոտավորապես 1:2000-3000 կենդանի ծնունդներ նեոնատալ մշտադիտարկմամբ երկրներում և մոտավորապես 1:6700 կենդանի ծնունդներ մինչ մշտադիտարկման դարաշրջանը [1]: Վերջին զեկույցները ցույց են տվել, որ որոշ երկրներում կարող է աճել առաջնային բնածին հիպոթիրեոզի տարածվածությունը, հատկապես նորմալ տեղակայված ՎԳ և մեղմ դիսֆունկցիայի դեպքերում: Պատճառները մնում են անորոշ [2], սակայն կարող են վերաբերել մշտադիտարկման շեմերի փոփոխություններին [3,4]:

Նորածնային մշտադիտարկման ծրագրերից ստացված արդյունքները նույնպես օգնել են բացահայտել լայն սպեկտրի ՎԳ դիսֆունկցիաները տարբեր ախտաձագումներով: Բնածին հիպոթիրեոզը կարող է դասակարգվել ըստ տեղակայման՝ առաջնային (ՎԳ) կամ երկրորդային/կենտրոնական (հիպոֆիզ և/կամ հիպոթալամուս), ըստ ծանրության՝ FT4 մակարդակը տարիքային նորմայի սահմանում (կոմպենսացված) կամ սուբկոմպենսացված (դեկոմպենսացված) և

սկսած տարիքը: Բնածին հիպոթիրեոզի ամենատարածված ձևն առաջնային հիպոթիրեոզն է բարձր TSH մակարդակով, արտացոլելով տարբեր տեսակների ոչ նորմալ ՎԳ զարգացում կամ դիսհորմոնոգենեզ: Երկրորդային հիպոթիրեոզը ավելի քիչ է հանդիպում, նույնիսկ մեկուսացված TSH անբավարարությամբ, շնորհիվ TSH բետտա- subunit ոչ ակտիվ մուտացիաների, TRH ընկալիչների կամ IGSF 1 (Immuno Globulin Super Family member 1)- (Իմունոգլոբուլին սուպեր ընտանիքի անդամ 1), կամ ավելի տարածված TSH անբավարարություն կապված այլ հիպոֆիզի հորմոնների անբավարարության հետ:

ՎԳ հորմոնների արտադրության խանգարումը կարող է նույնպես լինել ժամանակավոր կամ մշտական, ավելի ուշ պահանջելով բուժում ողջ կյանքի ընթացքում և ՎԳ դիսֆունկցիան կարող է փոփոխվել տվյալ անձի մոտ աճի և զարգացման փուլերով [5]: Անցողիկ առաջնային բնածին հիպոթիրեոզը կարելի է սահմանել բարձր TSH մակարդակով նորածնային շրջանի ընթացքում, նորմալ ՎԳ թեստի արդյունքներ ունենալով հետաձգված բուժման հետագա փուլում: Զուտ նկարագրական տերմինը «հիպերթիրեոտրոպինեմիա» վերաբերում է կոմպենսացված բնածին հիպոթիրեոզի մի ձևին, որի ժամանակ առկա է TSH կոնցենտրացիայի թեթև բարձրացում (օր.6-20mU/L) նորմալ ՎԳ հորմոնի կոնցենտրացիայով: Այն նույնպես կարող է լինել անցողիկ կամ մշտական:

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է Մանկական Էնդոկրինոլոգների Հայկական Ասոցիացիայի անդամների կողմից: Տեղեկատվության հավաքագրման մարտավարությունը ընդգրկել է բանալի բառերի օգնությամբ իրականացվող բազմաբնագավառ որոնում MEDLINE, PubMed, Cochrane library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարաններում: Որոնման ժամանակային շրջանակն է՝ 2010 – 2017թթ.: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն, պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում, ցանկացած

խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն, ապացույցների ուժի և որակի գնահատականներ և այլ), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Փաստաթղթի հիմքն է հանդիսացել Մանկական էնդոկրինոլոգիայի Եվրոպական Ասոցիացիայի կողմից (European Society for Pediatric Endocrinology, EASD) 2014թ. հրատարակված «Մանկական էնդոկրինոլոգիայի կոնսենսուսային ուղեցույցը բնածին հիպոթիրեոզի մշտադիտարկման, ախտորոշման և բուժման համար» [6], (EASD Clinical Practice Consensus Guidelines 2014 Compendium, Screening, diagnosis and management of congenital hypothyroidism), ինչպես նաև Cochrane library և UpToDate էլեկտրոնային շտեմարանների տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել Եվրոպական էնդոկրինոլոգիայի ասոցիացիայի կողմից Ցուցումների ուսումնասիրման և գնահատման համալիրի (GRADE) ձևափոխված տարբերակը [7] (տես՝ Հավելված 1.): Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Մանկական էնդոկրինոլոգների Հայկական Ասոցիացիայի կողմից (արձանագրությունը կցվում է):

Ուղեցույցը նախատեսված է մանկական էնդոկրինոլոգների, էնդոկրինոլոգների, թերապևտների, մանկաբույժների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Նորածնային մշտադիտարկում

Խորհուրդներ

- Բնածին հիպոթիրեոզի նորածնային մշտադիտարկման ծրագրերը շատ հաջող և տնտեսապես շահավետ են վերջին 4 տասնամյակների ընթացքում: Պացիենտ երեխաները հայտնաբերվում են շատ շուտ ծնվելուց հետո, հիմնականում մինչ կլինիկական սիմպտոմների և նշանների ի հայտ գալը: Վաղ ախտորոշումը և բուժումը կանխում է հիվանդացությունը, հատկապես նեյրոզարգացման խանգարումները (1/+++):

Ապացույցներ

Բազմաթիվ հետազոտությունները ցույց են տվել բնածին հիպոթիրեոզի սկրինինգի վաղ հաջողությունը՝ կարգավորել ծանր առաջնային բնածին հիպոթիրեոզով երեխաների ճանաչողական արդյունքները [8,9] և վահանաձև գեղձի ֆունկցիայի կարգավորման ժամկետները կարող են ազդել արդյունքների վրա [10]: Երեխաների խնամքի համար խուսափած կյանքի ծախսերը, որոնց մոտ մտավոր հետամանացությունը կանխարգելվում է բնածին հիպոթիրեոզի սկրինինգի արդյունքում, գնահատվում է գերազանցելու համար մշտադիտարկման և ախտորոշման ծախսերը [11]:

Վերլուծական մեթոդաբանություն, արդյունավետություն և բնածին հիպոթիրեոզի մշտադիտարկման ռազմավարության արդյունավետությունը.

Խորհուրդներ

Առաջնային բնածին հիպոթիրեոզի մշտադիտարկումն ամբողջ աշխարհում պետք է իրականացվի հնարավորինս հիմնված ազգային ռեսուրսների վրա:

- Նեոնատալ մշտադիտարկման նպատակը պետք է լինի հայտնաբերել առաջնային բնածին հիպոթիրեոզի բոլոր ձևերի հայտնաբերումը- թեթև, միջին և ծանր, հատկապես այն պացիենտների ծանր բնածին հիպոթիրեոզով, որոնց մոտ հիվանդացությունը բարձր է: Առաջնային

**բնածին հիպոթիրեոզի որոշման ամենազգայուն թեստը TSH
կոնցենտրացիայի որոշումն է (1|+++):**

Ապացույցներ

Առավել համոզիչ արդարացումը բնածին հիպոթիրեոզի նեոնատալ մշտադիտարկման համար աշխարհի բոլոր երկրներում ամենաարդյունավետ ձևն է կանխարգելելու մտավոր հետամնացությունը և նորմալ IQ ապահովումը այս պացիենտների պոպուլյացիայում [12,13]: Բացի այդ, յոդի անբավարարությունը բնածին հիպոթիրեոզի մտավոր հետամնացության ամենատարածված կանխարգելիչ պատճառն է ամբողջ աշխարհում [8,14,15]: Բնածին հիպոթիրեոզի նեոնատալ մշտադիտարկումը կարող է օգտագործվել որպես նեոնատալ և մայրական յոդի սնուցման վիճակի կայուն ցուցանիշ [16]: Նեոնատալ սկրինինգի թեստի ընտությունը հիմնված է հայտնաբերելու բնածին հիպոթիրեոզի ավելի ծանր ձևերը այնքան շուտ, ինչքան հնարավոր է, որովհետև հաշմանդամությունն ի շնորհիվ առաջնային բնածին հիպոթիրեոզի գերակշռում է այն պացիենտների մոտ, որոնք չեն բուժվել մինչև 3 ամսեկան հասակը [8,17]: TSH մշտադիտարկումն ամենազգայուն թեստն է առաջնային բնածին հիպոթիրեոզի հայտնաբերման համար և պետք է լինի միակ ամենակարևոր թեստը որևէ սկրինինգի ծրագրում [8,17,18]: Կանխատեսելիորեն, առաջնային բնածին հիպոթիրեոզի դեպքերի աճը պակասում է, երբ TSH մակարդակն իջեցվում է [3,12,17,19,20]:

Կան մի քանի հրատարակված ապացույցներ, ենթադրում են, որ նեոնատալ մշտադիտարկումը կենտրոնական բնածին հիպոթիրեոզի համար նաև կարող է բավարարել հիվանդության մշտադիտարկման այդ չափանիշներին [21-24].

1. Կենտրոնական բնածին հիպոթիրեոզը հարաբերականորեն հաճախակի հանդիպող հիվանդություն է, համանման ֆենիլկետոնուրիային որոշ պոպուլյացիայում:
2. Մշտադիտարկման թեստերը մատչելի են և էժան
3. Բուժումը մատչելի է և արդյունավետ

4. Անբարենպաստ արդյունքի ռիսկերը հետաձգված ախտորոշման դեպքերում հայտնի են և արդյունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մշտադիտարկումը միակն է հայտնաբերման համար, չնայած կլինիկական նշանների բացակայությանը [22]:

Նորածինների բնածին հիպոթիրեոզի ռիսկի հապուկ խմբերի մշտադիտարկում

Խորհուրդներ

- **Սպեցիֆիկ բիոքիմիական կրիտերիաները պետք է կիրառվեն նորածինների անցողիկ և մշտական բնածին հիպոթիրեոզի ռիսկի հատուկ խմբերի սկրինինգի համար և նրանց մոտ, եթե առաջնային սկրինինգի թեստը չի համապատասխանում կամ ապահովել է նորմալ արդյունքներ: Երկրորդային սկրինինգը կարող է պահանջվել հետևյալ դեպքերում-վաղաժամ նորածիններ 37 շաբաթականից քիչ հետագիտն տարիքով, նմուշի հավաքում կյանքի առաջին 24 ժամվա ընթացքում, մի քանի (բազմաթիվ) ծնունդներ, հատկապես նույն սեռի զույգերի դեպքում: Կրկնակի նմուշը պետք է վերցվի մոտավորապես 2 շաբաթականում կամ առաջին սկրինինգի թեստի իրականացումից 2 շաբաթ հետո (2++0):**

Ապացույցներ

Որոշ հետազոտություններից կան տվյալներ, որ պնդում են բազմակի նմուշառման համար անհաս նորածինների հետագիտն հասակը պակաս 37 շաբաթականից, ցածր քաշով ծնված (LBW) և շատ ցածր քաշով ծնված նորածիններ, հիվանդ կամ անհաս նորածիններ, որոնք ընդունվել են նորածնային վերակենդանացման բաժանմունք, նորածիններ, որոնցից նմուշը վերցվել է կյանքի առաջին 24 ժամում, և նորածիններ բազմակի ծնունդներից, հատկապես մոնոզիգոտ զույգերի դեպքում [8,9,12,17,19,25-29]: Այս մոտեցումն արտացոլում է այն անհանգստությունը, որ առաջնային բնածին հիպոթիրեոզը

կարող է չդրսևորվել այս վիճակներում TSH ճնշման շնորհիվ դեղորայքի նշանակման [30,31], հիպոթալամ-հիպոֆիզար անբավարարության [32], բազմակի ծննդաբերություններում պտղի արյան խարնուրդի [33] և այլ ծանր նորածնային հիվանդությունների ազդեցության հետևանքով [34-36]: Այսպիսով, սա մոտեցում է շատ կենտրոններում վերանայել TSH չորացած արյալ կաթիլը (DBS) այն ռիսկի նորածինների շրջանում, որոնց փորձում են դուրս գրել հիվանդանոցից: Կրկնակի մշտադիտարկումը չի ընդունվել բոլոր մշտադիտարկման ծրագրերի կողմից, որոշ կենտրոններ պնդելով, որ մատչելի սահմանափակ տվյալները ենթադրում են, որ չնայած այն հայտնաբերել է TSH հետաձգված բարձրացումով նորածիններ, սա մեծամասամբ անցողիկ խնդիր է [27]:

Որոշ նորածնային մշտադիտարկման ծրագրեր որոշում են սկզբնական T4 միայն, մինչդեռ TSH կարող է նույնպես գնահատվել առաջին նմուշի վրա: Այնուամենայնիվ, շատ ծրագրեր սկզբնական որոշելով T4 միայն, հետագայում գնահատում են TSH կոնցենտրացիան ամենացածր T4 ցուցանիշներով նորածինների մոտ (T4 ցուցանիշի ամենացածր 10% 1 օրում): Եթե TSH կոնցենտրացիան բարձր է, նորածինն կանչում են կրկնակի հետազոտման և գնահատման համար: Կրկնակի չորացած արյան կաթիլի նմուշները հավաքվում են, եթե T4 ցուցանիշը ցածր է հետազոտի հասակի համար սահմանված ցուցանիշից [37,38]: Եթե TSH թեստի արդյունքը սկզբնական մշտադիտարկմամբ նորմալ էր, սակայն կրկնակի թեստը ցույց է տալիս TSH բարձր կոնցենտրացիա, անցողիկ (մեծամասամբ դեպքերում) կամ առաջնային բնածին հիպոթիրեոզի գնահատումը և հնարավոր բուժումը պետք է սկսել անհապաղ: Նորածինները տևական ցածր T4 կոնցենտրացիայով, չորացած արյան կաթիլի թեստով պետք է FT4 և TSH շիճուկների որոշմամբ հաստատել կամ ժխտել կենտրոնական բնածին հիպոթիրեոզը (CCH) [8,9]:

Ախտորոշման չափորոշիչները

Արյան բիոքիմիական չափորոշիչներն օգտագործվում են նորածինների սկզբնական բուժման որոշման համար, եթե առկա է TSH բարձր և/կամ FT4 ցածր կոնցենտրացիա:

Խորհուրդներ

- **Խորհուրդ է տրվում սկսել բուժումը անմիջապես TSH և FT4 որոշումից հետո, եթե TSH կոնցենտրացիան $>$ կամ $=40\text{mU/L}$ ամբողջական արյան մեջ: Եթե TSH կոնցենտրացիան $<40\text{ mU/L}$ ամբողջական արյան մեջ, բժիշկը կարող է հետաձգել բուժումը, սպասելով շիճուկների արդյունքներին 1-2 օրից (1/++o):**
- **Խորհուրդ է տրվում սկսել բուժումն անմիջապես, եթե FT4 կոնցենտրացիան ցածր է տարիքային նորմայից, անկախ TSH կոնցենտրացիայից (1/+++):**
- **Բուժումը պետք է սկսել, եթե երակային TSH կոնցենտրացիան տևական $> 20\text{mU/L}$, նույնիսկ եթե ազատ T4 կոնցենտրացիան նորմալ է (2/+oo):**
- **Երբ երակային TSH կոնցենտրացիան $6-20\text{ mU/L}$ նորմալ երեխայի մոտ և ազատ T4 կոնցենտրացիան տարիքային նորմայի սահմաններում է, խորհուրդ է տրվում ախտորոշիչ հետազոտություն վերջնական ախտորոշման համար (2/+oo):**
- **Եթե TSH կոնցենտրացիան մնում է բարձր ավելի քան 3-4 շաբաթ, խորհուրդ է տրվում (ընտանիքի հետ քննարկումից հետո) սկսել L-T4 բուժում անմիջապես կամ թեստի կրկնումից հետո բուժման ավելի ուշ փուլում կամ կրկնել 2 շաբաթ հետո առանց բուժման (2/+oo):**

Ապացույցներ

L-T4 բուժումը պետք է սկսել անմիջապես, եթե երակային ազատ T4 կամ տոտալ T4 մակարդակները ցածր են, հաշվի առնելով բնածին հիպոթիրեոզի չբուժված (դեկոմպենսացված) բացասական հետևանքները աճի և նեյրոզարգացման վրա [39]: Նախկին աշխատանքները ցույց են տվել, որ դեկոմպենսացված հիպոթիրեոզի հավանականությունը բարձր է, եթե չորացած արյան կաթիլով TSH

մակարդակը բարձր է 40 mU/L [40], հիմնավորելով անհապաղ բուժումը, եթե չորացած արյան կաթիլով TSH կոնցենտրացիան բարձր է այս ցուցանիշից: Հաշվի առնելով, որ այդ ժամանակահատվածում մինչև 3 տարեկան հասակը ճգնաժամային ժամանակահատված է նեյրոզարգացման համար, շատ բժիշկներ կողմնակից են բուժման, եթե TSH կոնցենտրացիան >20 mU/L, ուշադիր հետևելով վահանաձև գեղձի ֆունկցիային՝ խուսափելով գերդոզավորումից և կրկնել 3 տարի հետո, եթե ՎԳ նորմալ է տեղակայված [41]: Այս հարցի քննարկումը շարունակում են, երբ TSH կոնցենտրացիան բարձր է, սակայն ավելի քիչ (6-20mU/L) և FT4 մակարդակը նորմալ է [42]: Ընտանիքը պետք է տեղեկացվի, որ սա «գորշ տարածություն» է, սակայն շատ բժիշկներ պետք է խորհուրդ տան «խաղալով անվտանգ» և այս վիճակում բուժելով վաղ մանկության ընթացքում [43]:

Նորածնային մշտադիտարկմամբ TSH բարձր կոնցենտրացիայի արդյունքների տեղեկացումը ընտանիքին, ընտանեկան բժշկին և տեղամասային մանկաբույժին

Խորհուրդներ

- **Եթե հայտնաբերվել է TSH բարձր կոնցենտրացիա սկրինինգի միջոցով, պետք է կապ ստեղծել փորձառու մասնագետի հետ՝ սկրինինգի լաբորատորիայի անձնակազմի անդամի կամ մանկական էնդոկրին թիմից մեկից հետ (2/+00):**
- **Եթե առկա է TSH բարձր կոնցենտրացիա, պետք է հաղորդակցվել ընտանիքի հետ նույնիսկ հեռախոսով ինչքան շուտ, որքան հնարավոր է (2/+ 00):**
- **Եթե հնարավոր է, երեխան պետք է անցնի կլինիկական գնահատման և երակային ՎԳ ֆունկցիայի որոշման դիմելու օրը կամ հաջորդ օրը (1/+00):**
- **Կենտրոնները պետք է ունենան համապատասխան տեղեկատվական նյութեր ախտորոշման և բնածին հիպոթիրեոզի վարման վերաբերյալ իրենց համայնքի համապատասխան լեզուներով (2/+00):**

- Պացիենտների ցույց է տրվում ինչպես տալ լնոթիրոքսինի առաջին դոզան (բժշկի կամ դեղագետի կողմից) (2/+00):

Կապը ընտանեկան բժշկի, տեղամասային մանկաբույժի կամ կրթողների հետ

Խորհուրդներ

- Երեխայի ընտանեկան բժիշկը և տեղամասային մանկաբույժը պետք է տեղեկացված լինեն հեռախոսով կամ նամակով, որոշելու նախնական ախտորոշումը և վարումը (1/+00):
- Երբ երեխան հասնում է մանկապարտեզի կամ դպրոցական հասակի, կոնսենսուսի խումբը խորհուրդ է տալիս կրթողների և ուսուցիչների իրազեկումը բնածին հիպոթիրեոզ ունեցող երեխայի վերաբերյալ՝ կանխարգելելու «պիտակավորումից» (2/++0):

Ապացույցներ

ESPE ուղեցույցներն ապահովում են մի փոքր տեղեկատվություն բարձր TSH կոնցենտրացիայով նորածինների ընտանիքների հետ կոնտակտի և խորհրդատվության վերաբերյալ [44]: Բրիտանացի մանկաբույժների հարցումը 2006-2007 թթ.-ին ցույց է տվել, որ 119 մանկաբույժներից 54 հարցվածները (43%) միշտ տեսնում են նորածին հետազոտության օրը, իսկ 65 (55%) սովորաբար տեսնում են երեխային նույն օրը կամ ավելի ուշ [45]: Բուժման սկզբում 1 ամսեկան հասակի ընթացքում չկա դրսևորված մի գործոն կրթական մակարդակով ֆրանսիական մեծ հետազոտության մեջ [46], բայց կան հիմքեր L-T4 բուժումը սկսել այնքան շուտ, որքան հնարավոր է ծնվելուց հետո, կանխարգելելու անդարձելի նեյրոճանաչողական խանգարումները:

Բնածին հիպոթիրեոզի ծանրության գնահատման չափանիշները կլինիկական, կենսաքիմիական և ռադիոլոգիական հատկանիշների տեսանկյունից

Խորհուրդներ

- Բնածին հիպոթիրեոզի ծանրությունը կարելի է գնահատել կլինիկորեն- սիմպտոմատիկ հիպոթիրեոզի հիման վրա, կենսաբանորեն- ծանր, միջին կամ թեթև FT4 մակարդակի հիման (FT4<5, 5-10, 10-15 pmol/l) համապատասխանաբար (1/+++):
- Եթե թիրեոզլոբուլինի կոնցենտրացիան ցածր է հայտնաբերված շեմից, բարձր է ենթադրությունը աթիրեոզի կամ ամբողջական թիրեոզլոբուլինի սինթեզի դեֆեկտի (2/+++):

Ապացույցներ

Սիմպտոմատիկ բնածին հիպոթիրեոզի կլինիկական սիմպտոմները և նշանները ներառում են- քնկոտություն, չեն արթնանում կերակրման համար, սառը վերջույթներ, ձգձգվող նեոնատալ դեղնուկ, անտարբերություն, հիպոտոնիա, մակրոգլոսիա, չոր մաշկ, այտուցված դեմք: Հետին գաղթունի, մեց առաջային գաղթունի և լայն սագիտալ կարանի երկարատևությունը արտացոլում են ուշացած ոսկրի հասունացում, որը կարող ենք հետագայում հայտնաբերել ծնկան ռենտգենով: 1 կամ 2 ծնկան էպիֆիզների բացակայությունը ցույց է տվել կապվածությունը.

1. T4 կոնցենտրացիայի հետ ախտորոշելիս

2. IQ արդյունքի, և այսպիսով ներարգանդային հիպոթիրեոզի հուսալի ցուցանիշի հետ [47,48]: Սուբնորմալ TT4 կոնցենտրացիայի ազդեցությունը IQ վրա նույնպես ապացուցված է, սկզբնական TT4 կոնցենտրացիան ցածր 40nmol/L (համարժեք FT4-5.5pmol/L) և նորմալ TT4 կոնցենտրացիայով երեխաների միջև 10 կետով IQ տարբերության հետ [49]: 82 համար տվյալները 10 օրական նորածինների մոտ զիջում են 2,5 պերցենտիլը, միջին կամ 97,5 պերցենտիլը 1,18, 1,75 և 2,49 ng/dL արժեքներով- համարժեք են 15,2, 22,5 և 32pmol/L [50]- հնարավոր դարձնելով կազմել մի սանդղակ պլազմայի FT4 կոնցենտրացիաների՝ <5, 5-10, 10-15pmol/L կենսաքիմիական ծանրության հիման վրա: Ռիտրաձայնային հետազոտությունը կարող է ցույց տալ ծանր առաջնային բնածին հիպոթիրեոզը ՎԳ բացակայության/ծանր հիպոպլազիայի կամ հանգույցով ամբողջական օրգանիֆիկացիայի դեֆեկտի դեպքերում: Համապատասխանաբար, ՌԻՁ<

կարող է ցույց տալ ծանրության տարբեր աստիճանները էկտոպիկ գեղձի կամ նորմալ ձևի և տեղայկայված գեղձի դեպքերում: Բնածին հիպոթիրեոզի ծանրության եզրահանգման կարելի է գալ, երբ կլինիկական պատմությունը, ֆիզիկական տվյալները, սկզբնական երակային արյան կենսաքիմիական արդյունքները, ծնկան ռենտգեն հետազոտությունը և ՎԳ ՈւՁՀ արդյունքները հավաքվել են միասին:

Նկարների տեխնիկաների վայրը- սցինտիգրաֆիա պերքլորատի դուրս գրման թեստով կամ առանց դրա և ՈւՁՀ բնածին հիպոթիրեոզ ախտորոշելիս

Խորհուրդներ

- Խորհուրդ է տրվում իրականացնել նկարների ուսումնասիրությունը որոշելու սպեցիֆիկ ախտաճագումը (1/++o):
- Սցինտիգրաֆիան և ՈւՁՀ միասին պետք է իրականացնել բարձր TSH կոնցենտրացիաներով նորածինների շրջանում (2/++o):
- Նկարումը երբեք չպետք է հետաձգի սկզբնական բուժումը: Սցինտիգրաֆիան պետք է իրականացնել L-T4 բուժումը սկսելուց 7 օրվա ընթացքում (1/++o):

Ապացույցներ

Սցինտիգրաֆիա

Սցինտիգրաֆիան կարելի է իրականացնել 10-20MBq տեխնեցիում 99m-ով (99mTc) կամ 1-2MBq յոդ 123-ով (123I): 99mTc ավելի հասանելի է, քիչ թանկ և արագ կիրառելի, քան 123I: Այնուամենայնիվ, 123I վերցվում է ՎԳ կողմից և տալիս է ավելի պարզ նկար, քան 99mTc [51]: Սցինտիգրաֆիան կարող է որոշել ՎԳ աթիրեոզը, հիպոպլազիան, նորմալ կամ մեծ գեղձը տեղում: Երբ ՎԳ նորմալ դիրքում է, դուրս է գրվում 123I դոզայի >10%, երբ պերքլորատը նշանակվել է 2 ժամով, ցույց տալով օրգանիֆիկացիայի դեֆեկտ [51]: Սցինտիգրաֆիան կարող է ցույց տալ ոչ պակաս, չնայած էտոպիկ ՎԳ առկայությանը յոդի ավելցուկային ընդունման միջոցով (օր. անտիսեպտիկ պրեպարատներով), մայրական TSH

ընկալիչները արգելափակելով հակամարմինները, TSH ընկճումը L-T4 բուժումից, TSH ընկալիչների և նատրումի/յոդի համակցիչի (NIS) ոչ ակտիվ մուտացիաները [52,53]:

Ուլտրաձայնային հետազոտություն

ՎԳ մակերեսային կառուցվածք է, որը կարելի է նկարել ՌԻՁՀ բարձր հաճախականությամբ գծային փոխարկիչով (10-15 MHz): ՌԻՁՀ իրականացվում է երկայնական և առանցքային հարթություններով, կարելի է կիրառել հայտնաբերելու բացակայությունը կամ առկայությունը, չափերը, ՎԳ էխոգեն հյուսվածքը և կառուցվածքը տեղում: Այնուամենայնիվ, այն չի կարող միշտ հայտնաբերել լեզվային և ենթալեզվային ՎԳ էկտոպիան [54-56], չնայած կիրառելով գունավոր դոպլեր հայտնաբերելու ՎԳ հյուսվածքը, նկարագրելով նշվածը ուժեղացած արյան հոսքում [57]: ՌԻՁՀ բարձր դիտարկող է և հայտնաբերողները պետք է հատկապես զգուշանան չախտորոշելով ոչ ՎԳ հյուսվածքը ՎԳ-ում որպես դիսպլաստիկ ՎԳ տեղում [54,58]: ՎԳ հյուսվածքն ավելի էխոգեն է, քան մկանը, բայց ավելի քիչ էխոգեն, քան ճարպը: ՎԳ հյուսվածքի բացակայությունը նորմալ տեղակայումով, քիչ հիպերէխոգեն կառուցվածքները համարյա նույն էխոգենությամբ, ինչպիսին են ճարպերը, հայտնաբերվում են շնչափողի 2 կողմերից, շփոթելով ՎԳ առկայության հետ: Կիստաները նույնպես նկարագրվում են դատարկ ՎԳ տարածությունում [59]:

Համակցված սցինտիգրաֆիա և ուլտրաձայնային հետազոտություն

Համակցված սցինտիգրաֆիան և ՎԳ ուլտրաձայնային հետազոտությունը անհատական պացիենտի մոտ օգնում է.

1. բարելավել ախտորոշման ճշտությունը [55,60]

2. որոշել էտոպիկ գեղձը, որը կարող է լինել նորմալ, մեծացած կամ հիպոպլաստիկ

3. առաջնորդել հետագա ախտորոշիչ հետազոտություններ, ներառելով մոլեկուլյար-գենետիկ հետազոտությունները

Բնածին մալֆորմացիաներ և համախտանիշներ, որոնք պետք է սիստեմատիկորեն փնտրել բնածին հիպոթիրեոզով երեխաների շրջանում

Խորհուրդներ

- **Ֆիզիկական հետազոտությունը պետք է իրականացնել բարձր TSH բոլոր նորածիններ մոտ, հայտնաբերելու համար բնածին մալֆորմացիաները, հատկապես, որոնք ազդեցություն ունեն սրտի վրա և այն երեխաների մոտ, որոնք ունեն դիսմորֆիկ համախտանիշ կամ նեյրոզարգացման խանգարումներ (1/+++):**

Ապացույցներ

Բնածին մալֆորմացիաների, հատկապես սրտային մալֆորմացիաների տարածվածությունը, ներառելով երիկամային խնդիրներ և ռիսկը նեյրոզարգացման խանգարումների ավելի բարձր է բնածին հիպոթիրեոզով պացիենտների, քան ընդհանուր բնակչության շրջանում [61-65]: Այնուամենայնիվ, պետք է տարբերակել իսկական բնածին հիպոթիրեոզը և անցողիկը բարձր TSH կոնցենտրացիայով հիվանդ երեխաների մոտ առանց կամ հավելյալ վահանաձև գեղձի մալֆորմացիաներով, ներառելով սրտի և խոշոր անոթների դեֆեկտները [66]: Դաունի համախտանիշը կապված է թեթև TSH կոնցենտրացիայի բարձրացման հետ նորածնային շրջանում, չնայած այն սովորաբար շատ քիչ է հայտնաբերելու նորածնային մշտադիտարկմամբ [67]: Պենդրեդի համախտանիշը հանգույցով կամ առանց հանգույցի և պսևդոհիպոպարաթիրեոզը կարող են միասին առաջացնել թեթև կամ չափավոր TSH կոնցենտրացիայի բարձրացում նորածնային շրջանի ընթացքում և պետք է կիրառել ներառել բնածին հիպոթիրեոզով ՎԳ տարբերակիչ ախտորոշման համար տեղում [60]:

Բնածին հիպոթիրեոզի բուժումը և մոնիտորինգը

Առաջնային և թերապևտիկ բուժում

Խորհուրդներ

- Լևոթիրոքսինը միակն է խորհուրդ տրվում բնածին հիպոթիրեոզի բուժման ընտրության հարցում (1/++o):
- L-T4 բուժումը պետք է սկսել այնքան շուտ, ինչքան հնարավոր է և ոչ ուշ կյանքի առաջին 2 շաբաթներից կամ անմիջապես երկրորդ պլանային սկրինինգի թեստի արդյունքներից հետո: Խորհուրդ է տրվում L-T4 սկզբնական դոզան 10-15 mkg/kg օրական: Նորածինները ծանր հիվանդությամբ, շատ ցածր TT4 կամ FT4 կոնցենտրացիայով մինչ բուժումը, սկզբնական բուժումը պետք է սկսել բարձր դոզաներով, և նրանք, որոնք ունեն թեթև կամ միջին ծանրության հիպոթիրեոզ, սկսում ենք ավելի ցածր դոզաներով (1/++o):
- L-T4 նշանակվում է per os: Եթե per os նշանակումը հնարավոր չէ, կարելի է նշանակել in vitro, այդ դեպքում IV դոզան չպետք է լինի ավել քան per os դոզայի 80%: Դոզան պետք է կարգավորվի ելնելով TSH և FT4 ցուցանիշներից (1/++o):
- L-T4 նշանակվում է հաբերի ձևով: Նորածինների և մանուկների համար հաբերը կարելի է մանրացնել և տալ փոքր գդալով, եթե անհրաժեշտ է մի քանի մլ ջրով կամ կրծքի կաթով: L-T4 կարելի է նշանակել հեղուկի ձևով, եթե ֆարմակոլոգիապես արտադրված և լիցենզավորված L-T4 լուծույթները հասանելի են (1/++o):
- L-T4 կարելի է նշանակել առավոտյան կամ երեկոյան, սնունդ ընդունելուց առաջ կամ սննդի հետ, սակայն պետք է նշանակել նույն ձևով ամեն օր (1/+++):

Ապացույցներ

T3 կենսաբանորեն ակտիվ հորմոն է, սակայն չկա ապացույց, որ L-T4 և L-T3 համակցված բուժումն ավելի արդյունավետ է, քան միայն L-T4 բուժումը, հավանաբար էնդոգեն դեյոդինազայի արդյունավետության բարձր աստիճանով,

որը T4 փոխակերպում է T3 [68,69], L-T4 հասանելի է հաբերի ձևով (ամենահաճախ կիրառվող ձևը) կամ ֆարմակոլոգիապես արտադրված և լիցենզավորված հեղուկի ձևով [70-73]: Վերջին ապացույցները ենթադրում են, որ բրենդային և ջեներիկ L-T4 կենսահամարժեք չեն, և բնածին հիպոթիրեոզի համար, հատկապես ծանր դեպքերում, ավելի խելամիտ է կիրառել բրենդային պրեպարատը [74]: Per os նշանակված հորմոնն ունի կենսահասանելիության նշանակություն 50-80%, որը կարող է ազդել սննդի կամ միներալների (կալցիում, երկաթ) առկայությամբ: Բնածին հիպոթիրեոզով երեխաների շրջանում գերզգայունությունը վիտամին D նշանակման հիպերկալցեմիայով նկարագրվել է L-T4 բուժման առաջին մի քանի շաբաթների ընթացքում, հավանաբար վիտամին D կանխարգելիչ չափաբաժինների նշանակման շնորհիվ [75,76]: Մեծահասակներին L-T4 նշանակումը քնելու ժամանակ թվում է նույնիսկ ավելի արդյունավետ ՎԳ հորմոնների մակարդակի առումով, քան նշանակումը առավոտյան և այժմ ավելի արդյունավետ է առավոտյան ժամերի նշանակումը քաղցած վիճակում [77]: L-T4 վաղ սկզբնական բուժումը կյանքի առաջին 2 շաբաթների ընթացքում, ցույց է տվել նեյրոզարգացման ընդհանուր ինտելեկտուալ արդյունք երեխաների շրջանում [78-81]: Հիվանդության ծանրությունը, ինչպես որոշել են ՎԳ շատ ծանր սկզբնական մակարդակներով շնորհիվ ՎԳ բացակայության կամ գործառույթի խանգարման և ուղիղ ռադիոակտիվ տարիքի, նույնպես համարվել է կարևոր գործոն նեյրոզարգացման համար [49,82-87]: Ծանր հիվանդությամբ երեխաները պետք է սկսեն L-T4 սկզբնական բուժումը ավելի բարձր չափաբաժիններով, առաջնորդվելով ՎԳ հորմոնների մակարդակի արագ կարգավորմանը և ունենան ավելի լավ ինտելեկտուալ արդյունք [88-91]:

Բուժման և անբարենպաստ ելքերի մոնիտորինգ

Խորհուրդներ

- L-T4 բուժման մոնիտորինգը պետք է հիմնված լինի FT4 (կամ TT4) և TSH կոնցենտրացիաները շիճուկում կամ պլազմայում պարբերաբար որոշումներով: Արյան նմուշները պետք է հավաքվեն վերջին L-T4 նշանակումից 4ժ հետո (1/++o):

- Խորհուրդ է տրվում TSH պահպանել տարիքային սպեցիֆիկ միջակայքում (խուսափել պահել TSH<0,05mU/L) և TT4 կամ FT4 կոնցենտրացիաները՝ տարիքային սպեցիֆիկ միջակայքի կեսից ավելի սահմանում (1/++o): Բժիշները պետք է ծանոթ լինեն այդ նորմաներին, որոնք իրականացվում են լաբորատորիայի թեստի միջոցով (1/+oo):
- Անբարենպաստ ելքեր L-T4 բուժման ընթացքում շատ քիչ է հանդիպում: ՎԳ հորմոնների մոնիտորինգը սկզբնական և պահպանողական բուժման ընթացքում նվազեցնում է ռիսկը (1/+oo):

Ապացույցներ

ՎԳ հորմոնների մակարդակների արագ կարգավորումը (առաջին 2 շաբաթների ընթացքում սկզբնական բուժումից հետո) և հարաբերականորեն ավելի բարձր FT4 կոնցենտրացիայի պահպանումը կյանքի առաջին տարվա ընթացքում բերում է ավելի դրական ինտելեկտուալ արդյունքի [90,92,93]: TSH և FT4 մակարդակների հաճախակի մոնիտորինգը պահանջվում է կանխարգելելու սուպրաֆիզիոլոգիական ՎԳ հորմոնների մակարդակները երկարատև ժամանակաշրջանի առաջացման համար [94-96]: Բնածին հիպոթիրեոզի համապատասխան բուժումը նվազեցնում է բուժման հետ կապված անբարենպաստ ազդեցությունների ռիսկը [97-99]: Նյարդաբանական և սրտային բարդությունների վրա հիմնված, որոնք երբեմն նկարագրվում են (թեև ոչ համապատասխան T4 բուժումով պացիենտների մոտ), նման առողջական վիճակով պացիենտներին պետք է հատուկ ուշադրություն դարձնել բուժման ընթացքում [100,101]:

Չափորոշիչներ վերագնահատելու համար վահանաձև գեղձը, փարբերակել մշտական և անցողիկ բնածին հիպոթիրեոզը TSH կոնցենտրացիայով և նորմալ տեղակայված վահանաձև գեղձով երեխաների բուժումը

**Չափորոշիչներ վահանաձև գեղձի վերագնահատման համար
Խորհուրդներ**

- ՎԳ վերագնահատումը խորհուրդ է տրվում այն դեպքերում, երբ իրականացվել է ոչ ախտածագումնային ախտորոշիչ գնահատում վաղ մանկության ընթացքում և/կամ երբ բուժումը սկսվել է երեխայի հիվանդ լինելու դեպքում (օր. անհաս): Վերագնահատումը նույնպես պարտադիր է, երբ սկզբնական գնահատումը ցույց է տվել նորմալ տեղակայված գեղձը, հանգույցով կամ առանց հանգույցի, նորածինների մոտ դրական ՎԳ հակամարմիններով (1/++o):
- ՎԳ վերագնահատումը ցուցված չէ, երբ ՎԳ դիագնոստիկ հստակ ցույց է տվել նկարի վրա կամ (բացառելով DUOX2 մուտացիաները կամ Պենդրեդի համախտանիշը) երբ դիսհորմոնոգենեզը հաստատվել է մոլեկուլյար գենետիկ թեստով (1/+++):

Ապացույցներ

ՎԳ վերագնահատումը կարևոր է, եթե չկա վերջնական ախտորոշում նորածնային շրջանի ընթացքում, եթե ցույց է տվել, որ բնածին հիպոթիրեոզ ունեցող 1/3 պացիենտների մոտ նորմալ տեղակայված ՎԳ կարող են ունենալ անցողիկ դիսֆունկցիա [41,60]: Վերագնահատումն անհրաժեշտ չէ, եթե ՎԳ ՈՒՁՀ նորածնային մշտադիտարկման ժամանակ հայտնաբերել է ՎԳ էկտոպիա, ակնհայտ կամ ճշմարիտ աթիրեոզ: Վերագնահատումն էական է այն դեպքերում, երբ առկա է անհաս կամ պացիենտ նորածնային շրջանում [27]: Այլ երեխաները, որոնց մոտ սկզբնական գնահատումը հայտնաբերել է նորմալ/մի փոքր վահանաձև գեղձ ՈՒՁՀ և ոչ պակաս սցինտիգրաֆիայով, պետք է նույնպես վերագնահատվեն, որովհետև այս դեպքը ենթադրում է մայրական հակամարմինների TSH ընկալիչների կամ TSH ընկալիչների մուտացիաների արգելակում [102]: Քանի որ յոդի անբավարարությունը կարող է նմանվել դիսհորմոնոգենեզին, թեստի կրկնումը ցուցված է այն երեխաների համար, որոնք ունեն թեթև դիսհորմոնոգենեզ [103]: Անցողիկ բնածին հիպոթիրեոզը նույնպես կապված է գենետիկ դեֆեկտների հետ, ինչպիսին է հետերոզիգոտ DUOX2 մուտացիան [104,105]:

Վահանաձև գեղձի վերագնահատման ժամանակահատվածը

Խորհուրդներ

* ՎԳ վերագնահատումը, բուժման ընթացքը պետք է ճիշտ իրականացնել 3 տարեկանից հետո (1/++o): Ավելի վաղ վերագնահատումը կարող է ցուցված լինել, եթե կլինիկական անամնեզում անցողիկ TSH կոնցենտրացիայի բարձրացումը հավանական է, օր.

1. նորածինների շրջանում, որոնց մոտ ՎԳ պերօքսիդազայի կամ TSH ընկալիչների հակամարմինները հայտնաբերվել են արյան մեջ
2. երբ էտոպիկ, նորմալ չափի ՎԳ հայտնաբերվել է ուլտրաձայնային սկանավորմամբ (2/++o):

Ապացույցներ

Մագնիսառեզոնանսային նկարի ուսումնասիրությունները հայտնաբերել են, որ կենտրոնական նյարդային համակարգի միելինացիան ավարտվել է 36-40 ամսեկան հասակում [106], այդ տեսանկյունից երեխան ավելի հավանական է օպերատիվ լինելու ՎԳ նկարման համար 1-2 տարեկանում: Այնուամենայնիվ, եթե TSH կոնցենտրացիայի անցողիկ բարձրացումը հավանական է, բժիշկը կարող է ավելի վաղ բուժումը սկսել 1 տարեկան հասակից:

Վահանածև գեղձի վերագնահատման մեթոդը

Խորհուրդներ

- Եթե պահանջվում է ճշգրիտ ախտորոշում, L-T4 պետք է աստիճանաբար դուրս գա 4-6 շաբաթվա ընթացքում (կախված պահպանողական չափաբաժնից) և ամբողջական վերագնահատումն իրականացվում է այս ժամանակաշրջանի վերջում կենսաքիմիական հետազոտություններով և ՎԳ ՈՒՁՀ, եթե հիպոթիրեոզը հաստատվել է (2/++o):
- Եթե բժիշկն ուզում է հաստատել առաջնային հիպոթիրեոզի առկայությունը կամ բացակայությունը, այլ ոչ ճշգրիտ ախտորոշում ստանալու համար, L-T4 չափաբաժինը կարելի է պակասեցնել 30% 2-3 շաբաթով: Եթե TSH>10mU/L նկատվում է այս ժամանակաշրջանի ընթացքում, մշտական հիպոթիրեոզ կարելի է ենթադրել: Ի տարբերություն, եթե ՎԳ գործառույթը մնում է նորմալ, հետագայում

չափաբաժինը կարելի է պակասեցնել, հետևելով թեստի արդյունքներին (2/++o):

Ապացույցներ

ՎԳ խանգարման ծանրությունը 2-3 տարեկան հասակից կարող է ակնհայտ լինել ցածր չափաբաժնի պահանջից [41,103] կամ, եթե համապատասխանությունը բավարար չի եղել, բարձր TSH մակարդակ չնայած բուժմանը:

Բնածին հիպոթիրեոզով հղի կանաց բուժումը և մոնիտորինգը

Խորհուրդներ

- **Բնածին հիպոթիրեոզով կանաց համար, ովքեր պլանավորում են հղիություն, նույնիսկ ավելի մեծ ջանքեր պետք է գործադրվեն համոզվելու, որ մայրական վ/հ հորմոնները օպտիմալ են: Նոր հղի պացիենտներին խորհուրդ է տրվում անմիջապես բարձրացնել L-T4 չափաբաժինը 25-30% դաշտանային ցիկլի բացակայության դեպքում կամ հղիության դրական թեստից հետո (1/++o):**
- **TSH և FT4 (կամ TT4) մակարդակները պետք է գնահատվեն շուտ, երբ հղիությունը հաստատվել է, ամեն 4-6 շաբաթը հղիության ընթացքում և չափաբաժնի փոփոխումից 4 շաբաթ հետո (1/+++):**
- **Բուժման նպատակն է պահպանել TSH կոնցենտրացիան 2,5mU/L ցածր առաջին եռամսյակում և 3mU/L ցածր հղիության ավելի ուշ ժամկետում (1/++oo):**

Ապացույցներ

Չկա հատուկ ապացույց բնածին հիպոթիրեոզով հղի կանաց բուժման ժամանակացույցի համար: Առաջարկվում է Ամերիկյան Վահանաձև Գեղձի Ասոցիացիայի և Էնդոկրին Ասոցիացիայի ուղեցույցները ՎԳ հիվանդությունների բուժման վերաբերյալ հղիության ընթացքում [107,109]:

Բուժված պացիենտների ելքերը

Նեյրոզարգացման արդյունք

Նեյրոճանաչողություն, վարքագիծ, հիշողություն, պսիխոմոտոր, դպրոցական առաջընթաց, լեզվական, լսողական և տեսողական ունակություններ

Խորհուրդներ

- Պսիխոմոտոր և լեզվական զարգացումը, ինչպես նաև դպրոցական առաջընթացը պետք է դիտարկվեն և վերահսկվեն բնածին հիպոթիրեոզ ունեցող բոլոր երեխաների շրջանում (1/+++o): Բժիշկները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն զարգացման ուշացումներին կամ սովորելու դժվարություններին և ծանր բնածին հիպոթիրեոզ ունեցող երեխաների խնդիրներին (աթիրեոզ, ծնկան էպիֆիզների բացակայություն, շատ ցածր T4 կամ շատ բարձր TSH կոնցենտրացիաներ ախտորոշելիս) կամ վատ էնդոկրին հսկողություն, հատկապես առաջին տարվա ընթացքում (1/+++):
- Առաջարկվում է մոտոր զարգացման մասնագիտացված խթանում, եթե պահանջվում է և անհատական կրթական պլան, եթե դպրոցական առաջընթացի վրա ազդում է (2/+++o):
- Հիշողության խնդիրները կարելի է կարգավորել նպատակային ուսուցմամբ (2/+++o):
- Վարքագծի վերաբերյալ մտահոգությունները պետք է լուծվեն ախտորոշման պահից մինչև դպրոցական հասակը (2/+++o):
- Համապատասխան բուժումն ամբողջ մանկության շրջանում կարևոր է և գերդոզավորումից պետք է խուսափել (1/+++):

Ապացույցներ

Վաղ և համապատասխան բուժմամբ, ինտելեկտուալ խնդիրները (IQ<70) հայտնաբերվում են բնածին հիպոթիրեոզի մշտադիտարկմամբ և հիմնական գլոբալ IQ այժմ 10-30 կետերով ավելի բարձր է այս պացիենտների մոտ, քան մինչ մշտադիտարկման դարաշրջանը [1]: Որոշ պացիենտներ դեռ ունեն նեյրոճանաչողական և վարքագծային ուշացում, որը մնում է մինչև երիտասարդների և մեծահասակների շրջանում և որոնք կապված են հիվանդության ծանրության հետ [78,82,110,111]: Ճանաչողության արդյունքը կապված է բուժման և L-T4 չափաբաժնի հետ [90], դպրոցական առաջընթացը

կարող է ազդեցություն ունենալ [112]: Վարքագծի գնահատականները դպրոցնախնական ընդունման ժամանակ նորմայի սահմաններում են [89] և բնածին հիպոթիրեոզի ազդեցությունը վարքագծի վրա տարբերվում է տարիքով և տարբեր է երեխաների և իրենց ծնողների միջև [113]: Բնածին հիպոթիրեոզով պացիենտները չունեն ուշադրության պակաս-գեշարժունակության խանգարումների բարձր ռիսկ, բայց կարող են ունենալ ավելի կայուն ուշադրության խնդիրներ կապված գերդոզավորման էպիզոդների հետ [114,115] և ծանր դեպքերում, դանդաղ տեղեկատվության մշակում [116]: Թեթև և սպեցիֆիկ հիշողության դեֆիցիտները և նվազեցված հիպոկամպալ ծավալները կարելի է դիտարկել [117]: Կա նաև մոտոր խանգարումների ռիսկ [118]:

Լսողական, տեսողական, խոսքային զարգացում

Խորհուրդներ

- **Կրկնակի (ոչ միայն նորածնային) լսողական թեստերը պետք է իրականացնել մինչ դպրոցական տարիքը և ինչպես պահանջվում է (2/++o):**
- **Առաջարկվում է գնահատել պացիենտներին տեսողական խնդիրների ապացույցների համար (ոչ միայն տեսողության վատացման) (2/++oo):**
- **Խորհուրդ է տրվում մշտադիտարկում խոսքի հետաձգման դեպքում 3 տարեկան հասակից և առաջարկել խոսքի թերապիա ինչպես պահանջվում է (2/++o):**

Ապացույցներ

Պենդրեդի համախտանիշով պացիենտներին նույնիսկ բացառելուց հետո, լսողական խնդիրների տարածվածությունը ավելի բարձր է բնածին հիպոթիրեոզով պացիենտների մոտ, քան տեղեկացված բնակչության մոտ, հավանաբար անհրաժեշտություն է լինում կիրառելու լսողական ապարատներ երեխաների շրջանում: Խոսքի զարգացման վրա էական բացասական ազդեցությունները, դպրոցական խնդիրները և սոցիալական փոխազդեցությունները կարող են առաջանալ, եթե լսողական խանգարումը ախտորոշված չէ [119]: Այս խանգարմանը կարող է հանգեցնել ՎԳ հորմոնի

կողմից կոխվեար զարգացումը և լսողական գործառույթը [120,121]: Կա նաև տեսողական խնդիրների զարգացման ռիսկ [10,46]:

Առողջություն-կապված կյանքի որակի հետ (HrQOL)

Խորհուրդներ

- Բուժման համապատասխանությունը պետք է բարելավվի ողջ կյանքը (1/+++):
- HrQOL հետագա ուսումնասիրություններում «պատրանքի կենտրոնացումը» պետք է հաշվի առնել (մի ձև է, որը նման է «պիտակավորմանը» դպրոցում) (2/+oo):

Ապացույցներ

Կա ռիսկի դանդաղ նվազում, հատկապես մտավոր հետամնացության, եթե բուժումը սուբօպտիմալ է [46,122,123]:

Պացիենտի և մասնագիտացված կրթության համապատասխանությունը

Խորհուրդներ

- Բնածին հիպոթիրեոզի վերաբերյալ բժշկական ուսուցումը պետք է բարելավվի բոլոր մակարդակներով (1/+++):
- Երկուսի բժշկական ուսուցումը՝ ծնողների և պացիենտների կարևոր է, հատկապես մեծ տարիքի անցնելու և հղիության ընթացքում (1/+++):

Ապացույցներ

Բժիշկների հավատարմությունը ուղեցույցներին շատ ցածր մակարդակի է [45]:

Ոչ ճիշտ բուժման համապատասխանությունը տարածված է բոլոր տարիքներում [46,124]:

Աճ, սեռական հասունացում և ծնելիություն

Խորհուրդներ

- **Բուժման համապատասխանությունն ազդում է աճի վրա և պետք է բարելավվի (1/+++):**
- **Նորմալ աճ, սեռական հասունացում և ծնելիություն կարելի է սպասել, եթե բուժման համապատասխանությունը բավականին լավ է (1/+++):**

Ապացույցներ

Համապատասխան բուժում ստացած բնածին հիպոթիրեոզով պացիենտներն ունեն նորմալ քաշ և հասակ [125]: Պացիենտները կարող են ունենալ ավել քաշ վաղ մանկության և մեծահասակների շրջանում [46,126]: Գլխի շրջագիծը կարող է ավելի մեծ լինել, քան նորմալ, սակայն սա արտացոլում է ավելի շատ ոսկրի, քան ուղեղի զարգացումը [127]: Սեռական հասունացման, մենարխեյի տարիքի սկիզբը և դաշտանային ցիկլերը նորմալ են: Պտղաբերությունը սովորաբար նորմալ է, բացառությամբ ամենաձանր հետևանքներ ունեցող կանանց շրջանում[128,129]:

Ոսկրի առողջությունը

Խորհուրդներ

- **Բնածին հիպոթիրեոզով պացիենտները պետք է L-T4 համապատասխան բուժում ստանան, օրական 800-1200մգ կալցիումով և ավելացնեն հավելումներ, եթե բավարար չէ (2/+oo):**

Ապացույցներ

ՎԳ հորմոնները ոսկրի ձևավորման վրա ունեն մեծ ազդեցություններ: Պացիենտները, որոնք ունեն L-T4 գերդոզավորում, ոսկրային ռեզորբցիայի մակարդակն ավելի բարձր է, քան ոսկրի ձևավորումը, նպաստելով ոսկրի կորստի հարաճմանը: Բուժման նպատակն է ունենալ էութիրեոզ վիճակ TSH նորմալ կոնցենտրացիայով: Միայն մի քանի հետազոտություններ գնահատել են երկարատև L-T4 բուժման ազդեցությունը ոսկրի հանքային խտության վրա: 2 հետազոտություններ պարզել են, որ ոսկրի հանքային խտությունը բնածին հիպոթիրեոզով երեխաների և երիտասարդների շրջանում նորմայի սահմաններում է [130,131]:

Մեդաբուխիկ և սիրտ-անոթային առողջություն

Խորհուրդներ

- Խորհուրդ է տրվում կենսակերպի փոփոխություն, ներառելով սննդակարգ և ֆիզիկական վարժություններ, պետք է բարելավել բնածին հիպոթիրեոզով անհատների շրջանում (2/+00):
- Բնածին հիպոթիրեոզի օպտիմալ բուժումը կարևոր է սիրտ-անոթային առողջության համար (1/+00):

Ապացույցներ

Բնածին հիպոթիրեոզով պացիենտներն ունեն քաշի ավելցուկի և մետաբուխիկ բարդությունների ավելի բարձր ռիսկ [46]: Ունեն նաև բնածին սրտի մալֆորմացիաների բարձր ռիսկ [61,62], կա թեթև սիրտ-անոթային ռիսկի գործոնների բարձրացում բնածին հիպոթիրեոզով երիտարդների շրջանում կապված բուժման համապատասխանության հետ [132]:

Գենետիկ խորհրդատվության չափորոշիչները

Խորհուրդներ

- Գենետիկ խորհրդատվությունը պետք է ներառի բացատրելով բնածին հիպոթիրեոզի ռեցիդիվի ռիսկը «տուժած» ընտանիքի ընտանեկան պատմության և ՎԳ մորֆոլոգիայի հիման վրա: Յուրաքանչյուր ընտանիք պացիենտ երեխայով պետք է տեղեկացված լինի բնածին հիպոթիրեոզի 2 հիմնական ձևերի մասին (դիսգենեզ և դիսհորմոնոգենեզ) և եթե հնարավոր է բացատրություն ստանան իրենց ժառանգման և հաճախականության կրկնման վերաբերյալ: Գենետիկ խորհրդատվությունը պետք է լինի բավականին նպատակային, քան ընդհանուր (2/++0):

Ապացույցներ

Առաջնային բնածին հիպոթիրեոզի դեպքերի շուրջ 80% ՎԳ դիսգենեզիայի և 20% դիսհորմոնոգենեզի հետևանք են: ՎԳ դիսհորմոնոգենեզն առաջանում է

սպիտակուցները կողավորող գեների մուտացիաների կողմից, որոնք ներառված են ՎԳ հորմոնի սինթեզին. SCL5A5/NIS (յոդի տրանսպորտի դեֆեկտ, OMIM No 274400), պենդրին SCL26A4/PDS (Պենդրեդի համախտանիշ, OMIM No 274600), թիրեոգլոբուլին, TG (OMIM No 274700), կրկնակի օքսիդազա 2, DUOX2 (OMIM No 607200), կրկնակի օքսիդազայի զարգացման գործոն 2, DUOX2A (OMIM No 274900), կամ յոդթիրոզին դեյոդինազա, IYD/DEHAL1 (OMIM No 274800): Այս մուտացիաները ժառանգվում են աուտոսոմ ռեցեսիվ ձևով և կապված չեն այլ մալֆորմացիաների հետ, բացի խուլությունից Պենդրեդի համախտանիշի դեպքում [133]: Մեկուսացված ՎԳ դիագնոզը (OMIM No 218700) սովորաբար սպորադիկ հիվանդություն է: 3 դիտարկումներն առաջարկում են հնարավորինը, դեռևս անհայտ գենետիկ հիմքը.

1. Ընտանեկան դեպքերի ավելի բարձր տոկոսը (15 անգամ ավելի բարձր), քան կապասվեր միայնակ լինելու դեպքում
2. ցածր մորֆոլոգիական ՎԳ աննորմալություններ պացիենտների էութիրեոիդ առաջին աստիճանի հարազատների դեպքում ՎԳ դիագնոզիայով
3. արտավահանաձև գեղձային մալֆորմացիաների հետ կապված շատ դեպքեր [61-63,134-137]: ՎԳ դիագնոզիայի և TSH ռեզիստենտության համախտանիշային և ոչ համախտանիշային հատուկ գենետիկ ձևերը կարող են կապված լինել NK2 homeobox 1 (NKX2-1, ուղեղ-թոք-ՎԳ համախտանիշ, OMIM No 610978), Forkhead box E1 (FOXE-1, Bamforth-Lazarus համախտանիշ, OMIM No 241850), Paired box gene 8 (PAX8, OMIM No 218700), NK2 homeobox 5 (NKX2-5, OMIM No 225250), TSH ընկալիչների (TSHR, OMIM No 275200), և Gs alfa (GNAS, պսևդոհիպոպարաթիրեոզ տիպ 1A, OMIM No 103580) գեների մուտացիաների հետ [133,138]:

Մոլեկուլյար կենսաբանությունը բնածին հիպոթիրեոզի ախտորոշման և բուժման մեջ

Խորհուրդներ

- Պահանջվում է բնածին հիպոթիրեոզով պացիենտների մանրամասն ֆենոտիպային նկարագրություն (ներառելով ՎԳ մորֆոլոգիական

քննությունները) և առաջարկվում է, որ որևէ համաշտանիշի կապը պետք է ուսումնասիրել գենետիկորեն հայտնաբերելու բնածին հիպոթիրեոզի նոր գեներ և հնարավորին չափով ապահովել համապատասխան գենետիկ խորհրդատվություն: Դիագնոզիայի ընտաբեկան դեպքերի առկայությամբ դեպքում պետք է փնտրել TSHR և PAX8 գեների մուտացիաները (2/++o):

Ապացույցներ

Մոլեկուլյար կենսաբանության տեխնիկաները կարող են հայտնաբերել բնածին հիպոթիրեոզի պատճառները ընտանեկան պատմության և ՎԳ մորֆոլոգիայի հիման վրա: NKX2-1 մուտացիայի հայտնաբերումը ենթադրում է, որ պետք է հատուկ ուշադրություն դարձնել նյարդաբանական զարգացմանը և թոքերի հիվանդություններին «տուժած» երեխաների դեպքում [139,140]: FOXE-1 մուտացիայի հայտնաբերումը ենթադրում է, որ պետք է հատուկ ուշադրություն դարձնել նյարդաբանական զարգացմանը [141]: PAX8 մուտացիայի դեպքում երիկամների և միզուղիների ՌԻՁՀ պետք է իրականացնել, և երիկամների գործառույթի մոնիտորինգ, եթե հայտնաբերվել են մալֆորմացիաներ [142]: SCL26A4/PDS մուտացիաների հայտաբերման դեպքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել երեխայի լսողությանը [143]: TG կամ TPO մուտացիաների հայտնաբերումը ենթադրում է քաղցկեղի ռիսկ հանգույցով մեծահասակների շրջանում [133,144]: Դեռ պարզ չէ արդյոք ՎԳ քաղցկեղը գեն-սպեցիֆիկ է կամ կապված է հանգույցի առաջացման հետ: GNAS մուտացիայի հայտնաբերման դեպքում պետք է ուշադրություն դարձնել կապված այլ էնդոկրին և ոչ էնդոկրին խանգարումների հետ [145]:

